

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի իրավասությունները մրցակցության պաշտպանության բնագավառում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացնելով տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի կարգավորումը, նպատակ ունի իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը:

Տնտեսական մրցակցություն կամ **մրցակցություն** դա ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեությունն է, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում ծագող հարաբերությունները կարգավորում են «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԼՂՀ օրենքներով (այսուհետ՝ օրենք) և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովն տնտեսական մրցակցային միջավայրի ձևավորման և բարելավման նպատակով իրականացնում է՝

- **Վերահսկողություն:** Հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, համակենտրոնացումների, անբարեխիղճ մրցակցության, պետական օժանդակության դեպքերի բացահայտման, ինչպես նաև Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն:

- **Ապրանքային շուկաների ուսումնասիրություն:** Ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի որոշմամբ սահմանվում են ապրանքի ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմանները, շուկայում գործող մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կազմը և նրանց մասնաբաժինները:

- **Ստուգում, ուսումնասիրություն, դիտանցում:** Տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով իրականացնում է ստուգում, ուսումնասիրություն և (կամ) դիտանցում:

- **Տեղեկատվության պահանջում:** Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա պետական մարմինները, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

▪ **Վարչական վարույթ:** Վարչական վարույթը Հանձնաժողովի կողմից վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն է: Վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ Հանձնաժողովի նախաձեռնության հիման վրա: Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող՝ Հանձնաժողովի վարչական որոշումն է, որն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

▪ **Պատասխանատվության ենթարկում:** Օրենքի խախտման դեպքում տալիս է նախազգուշացում՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու հանձնարարությամբ, նշանակում է տուգանք՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու և տուգանքը վճարելու հանձնարարությամբ՝ սահմանելով հանձնարարության կատարման ժամկետ:

▪ **Տնտեսավարող սուբյեկտների ապախոչորացում:** Գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ չարաշահման դեպքում Հանձնաժողովն ունի տնտեսավարող սուբյեկտների ապախոչորացման (բաժանման, առանձնացման, փայաբաժնի կամ միջոցների օտարման) իրավունք:

▪ **Եզրակացությունների տրամադրում:** Պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերի, այլ փաստաթղթերի (կազմակերպված մրցույթների վերաբերյալ որոշումների, արձանագրությունների և այլն) տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը հակասելու, կնքվող համաձայնությունների, պետական օժանդակությունների, ինչպես նաև համակենտրոնացումների մասին եզրակացությունների տրամադրում:

▪ **Դիմում դատարան:** Օրենքի խախտման վերաբերյալ, այդ թվում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ընդունած ակտերը, տնտեսավարող սուբյեկտների՝ օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաև այդ պայմանագրերի փոփոխման կամ լուծարման պահանջով:

▪ **Դիմում ԼՂՀ կառավարությանը:** Պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ:

▪ **Կարգերի ընդունում:** Հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի (այդ թվում՝ առևտրային ցանցերի, շուկայական իշխանության ճանաչման), համակենտրոնացումների, անբարեխիղճ մրցակցության, պետական օժանդակության, դիտանցումների, հսկիչ գնումների, ինչպես նաև ապրանքային շուկայի որոշման հետ կապված ընդունում է համապատասխան կարգեր:

▪ **Իրավական ակտերի ու ստորագրված պայմանագրերի փորձաքննություն:** Հանձնաժողովն իրականացնում է պետական մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի և ստորագրված պայմանագրերի փորձաքննություն՝ տնտեսական մրցակցության օրենսդրությանը դրանց համապատասխանության վերաբերյալ: Փորձաքննությունը կատարվում է Հանձնաժողովի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ յուրաքանչյուր ֆիզիկական ու իրավաբանական անձի կամ իրավական ակտն ընդունող կամ պայմանագիր ստորագրող մարմնի դիմումի համաձայն:

▪ Ակտերը ոչ իրավաչափ, ուժը կորցրած ճանաչում - համակենտրոնացման կամ պետական օժանդակության, պետական մարմինների, տնտեսավարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի կասեցումը, լուծարումը (լուծում, դադարեցում), ակտերի ոչ իրավաչափ, ուժը կորցրած ճանաչումը:

Հանձնաժողովը իրականացնելով օրենքով վերապահված լիազորությունները ակնկալում է, որ դրական ազդեցություն կունենա տնտեսական բարենպաստ միջավայրի ձևավորման և բարելավման գործում, ինչն էլ խթան կհանդիսանա ձեռնարկատիրական գործունեության զարգացման, հասարակության կենսամակարդակի բարձրացման, պետության տնտեսական անվտանգության ամրապնդման գործում: